

# ԱՍՏՎԱԾ ԿԸ ՀՈԳԱ

## ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

Moriah, מֹרְיָהּ = "chosen by Jehovah" the place where Abraham took Isaac for sacrifice the mount on the eastern edge of Jerusalem on which Solomon built the temple.

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. (ԾՆՆԴ. 22:1-19, 2 ՄՆԱՑ. 3:1 )

Եւ եղաւ որ այս բաներից հետոյ Աստուած փորձեց Աբրահամին և ասեց նորան, Աբրահամ. Եւ նա ասեց, **Ահա ես:** 2 Եւ նա ասեց. Առ քո սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը և Մօրիայի երկիրը գնա, և այնտեղ նորան ողջակէզ արա այն սարերի մէկի վերա որ ես քեզ կասեմ: 3 Աբրահամն առաւօտեան վեր կացաւ և իր էջի համետը դրաւ, և վեր առաւ իր հետ երկու ծառաները և իր որդի Իսահակը. Եւ ողջակէզի փայտ կոտրեց, և վեր կացաւ գնաց այն տեղը, որ Աստուած իրան ասել էր: 4 **Եւ երրորդ օրն** Աբրահամն իր աչքերը բարձրացրեց, և հեռուից տեսաւ այն տեղը: 5 Եւ Աբրահամն ասեց իր ծառաներին. Դուք այդ էջի հետ այստեղ մնացէք, և ես և տղան մինչև այն տեղ գնանք և **երկրպագութիւն անենք, եւ ձեզ մօտ ետ կդառնանք:** 6 Եւ Աբրահամն առաւ **ողջակէզի փայտը եւ իր որդի Իսահակի վերայ դրաւ, և ինքն իր ձեռքն առաւ կրակը և դանակը, և երկուսը մէկտեղ գնացին:** 7 Եւ Իսահակը խօսեց իր հայր Աբրահամի հետ և ասեց. Հայր իմ. Եւ նա ասեց. **Ահա ես,** որդիս: Եւ նա ասեց. Ահա կրակը և փայտը, բայց ո՞ր է ողջակէզի համար գառը: 8 Եւ Աբրահամն ասեց. **Աստուած կը հոգա իր գառը ողջակէզի համար,** որդեակս: Եւ երկուսը միասին գնացին: 9 Եւ եկան այն տեղը, որ Աստուած նորան ասել էր. Եւ Աբրահամն այնտեղ սեղան շինեց, և փայտերը շարեց, **եւ իր որդի Իսահակին կապեց՝ սեղանի վերայ** դրաւ նորան փայտերի վերայից: 10 Եւ Աբրահամն իր ձեռքը մեկնեց, և դանակն առաւ որ իր որդուն մորթի: 11 Եւ **Եհովայի հրեշտակը** երկնքից նորան ասեց. Աբրահամ, Աբրահամ. Եւ նա ասեց, **Ահա ես:** 12 Եւ նա ասեց. Ձեռքդ տղային մի դպցնիր, և նորան մի բան մի անիր, որովհետև հիմա իմացա, որ դու Աստուածանից վախում ես. Եւ քո մէկ հատիկ որդին ինձանից չխնայեցիր: 13 **Եւ Աբրահամն իր աչքերը վեր բարձրացրեց եւ նայեց,** և ահա մի խոյ կար ետևին մացառներում եղջիւրներով բռնված: Եւ Աբրահամը գնաց և խոյն առաւ, և նորան իր որդու փոխարէն ողջակէզ մատուցեց: 14 Եւ Աբրահամն այն տեղի անունը **Եհովայի տէր կոչեց,** որ այս օր ասվում է, թէ Այն սարում ուր **Եհովան երեսում է:** 15 Եւ Եհովայի հրեշտակն երկրորդ անգամ երկնքից Աբրահամին կանչեց, 16 Եւ ասեց. Ինձանով երդում եմ անում, ասում է Եհովան, որովհետև դու այս բանն արիր, և քո մէկ հատիկ որդին չխնայեցիր, 17 Քեզ օրհնելով կօրհնեմ, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզերքում լինող աւազի պէս շատացնելով կշատացնեմ. Եւ քո սերունդը իր թշնամիների դուռը կժառանգէ. 18 Եւ երկրի բոլոր ազգերը քո սերունդով կօրհնուին. նորա համար որ իմ ձայնին ականջ դրիր: 19 Եւ Աբրահամը ետ դարձաւ իր ծառաների մօտ, և վեր կացան և մէկտեղ Բերսաբէէ գնացին. Եւ Աբրահամը բնակվում էր Բերսաբէէում:

## 2 ՄՆԱՑ. 3:1

Եւ Սողոմոնն սկսեց շինել Տիրոջ տունը Երուսաղէմում Մօրիա սարի վերայ, ուր որ երևեցաւ նորա հայր Դաւիթին այն տեղի վերայ որ Դաւիթը պատրաստել էր Յեթուսացի Ունայի կալումը:

### 1. ՍԵՐԸ ՊԱՅԱՆՁՈՒՄ Է ՁՈՅԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ - ԶՈՎ. 3:16, ԾՆՆԴ. 22:2, ՄԱՏ. 3:17

Որովհետեւ Աստուած այնպէս սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուաւ. որ ամեն նորան հաւատացողը չկորչի, այլ յաւիտենական կեանքն ունենայ:

### 2. ԶԱՎԱՏՔԸ ՊԱՅԱՆՁՈՒՄ Է ՁՈՅԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ - ԵԲՐԱՅԵՑԻՍ 11:17-19, ԾՆՆԴ. 22:2

17 Հաւատով վ է, որ Աբրահամը, իր փորձութեան մէջ, Իսահակին որպէս զոհ մատուցեց. և նա, ով խոստումն էր ընդունել, իր միածին որդուն էր որպէս զոհ մատուցում: 18 Աբրահամին ասուած էր, թէ «Իսահակով վ քեզ սերունդ պիտի տրուի»: 19 Աբրահամը իր մտքում մտածեց, թէ Աստուած կարո՞ղ է մեռելներից էլ յարուսթիւն տալ Իսահակին: Ուստի և, որպէս նախօրինակ այդ բանի, նա հետ ստացաւ իր որդուն:

## ՁՈՒԳԱՅԵՆՆԵՐ ԻՍԱԶԱԿԻ ԵՎ ԶԻՍՈՒՍԻ ՄԻՋԵՎ

Աստվածաշնչում չկա ավելի պարզ օրինակ Խաչի և այն զոհի մասին, որը Չայր Աստված արեց մեզ համար Քրիստոսում, քան Ծննդոց 22-րդ գլուխը: Ուշադրություն դարձրեք հետևյալ տպավորիչ զուգահեռներին Իսահակի և Քրիստոսի միջև:

### 1. Երկուսն էլ խոստման իրականացում էին.

Իսահակն Աբրահամի վաղուց խոստացված որդին էր (Ծննդոց 12:3)

Զիսուը վաղուց խոստացված Մեսիան էր (Ծննդոց 3:15, 13:3)

### 2. Երկուսն էլ իրենց հոր միակ որդիներն էին.

Աստված ասաց Աբրահամին, որ Իսահակը «...քո սիրած մեկ հատիկ որդիդ...» է (Ծննդոց 22:2)

Աստված ասաց. «Դա է Իմ սիրելի Որդին, որին Ես հավանեցի» (Մատթեոս 3:16,17)

Երկուսն էլ սիրված էին իրենց հայրերի կողմից (Ծննդոց 22:2, Մատթեոս 3:16,17)

### 3. Երկուսն էլ եռօրյա փորձառություն ունեցան.

Իսահակը երեք օր ծանապարհ ընկավ դեպի Մօրիա սարը

Զիսուը երեք օրում անցավ խաչը, գերեզմանը և հարությունը

### 4. Երկուսն էլ կրում էին իրենց փայտը.

Իսահակը կրում էր իր ողջակիզվելու փայտը (Ծննդոց 22:6)

Զիսուը կրում էր Իր խաչափայտը (Հովհաննես 19:17)

**5. Երկուսն էլ հնազանդվեցին իրենց հորը.**

Իսահակը հոժարությամբ պառկեց զոհասեղանին՝ հնազանդվելով իր հորը (Ծննդոց 22:9)

Չիսուսը հնազանդվեց Իր Չոր ծրագրին և կամքին (Ղուկաս 22:42)

**6. Երկուսն էլ հարց տվեցին իրենց հորը.**

Իսահակը հարցրեց Աբրահամին. «Ահա կրակը և փայտը, բայց ո՞ր է ողջակեզի համար գառը» (Ծննդոց 22:7)

Չիսուսն աղաղակեց խաչի վրա. «Իմ Աստված, Իմ Աստված, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մատթեոս 27:46)

**7. Երկուսն էլ հարություն առան մեռելներից.**

Իսահակը «հարություն առավ» փոխաբերական իմաստով (Ծննդոց 22:12)

Չիսուսը հարություն առավ մեռելներից խաչվելուց 3 օր անց (Մատթեոս 28:6,7)